



Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мелік».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

Ծածկագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առն օրերէն).

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լիզումով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւաքանչիւր տողական 10 կոպէկ.
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արդիւնաբերական կազմակերպութիւն գաւառում.—ՆԵՐՔԵԱՐԹԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց թատրոն. Նամակ Բազումից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. Հեռագրեր.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.—ՆԵՐ.—ԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Հ. Լինչի գործը:

ԱՐԴԻՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ԹԻՒՆ ԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

«Մշակի» 227 համարում մենք տրւեցինք մի լուր Նոր-Բայազէտից այն տեղ կազմված մի նոր ընկերակցութեան մասին: Այդ ընկերակցութեան նպատակն է տարածել և կանոնաւորել գործադրութեան արհեստը գաւառում: Նա պէտք է ընդունի աշակերտներ և սովորեցնի նրանց այդ արհեստը:

Ինչպէս յայտնի է, արեւելեան գորգերը վերջին տասնեակ տարիներում մեծ արժէք ստացան արեւմտեան Եւրոպայում և շատ վաճառականական տներ ուղարկեցին իրանց գործակալներին Պարսկաստան, Փոքր Ասիա և Կովկաս ժողովուրդ գորգեր: Այդ տներից մէկը Պարսկաստանի Սուլթանաբաթ կոչված տեղում հիմնեց մի մեծ պահեստ, որն ունի յատուկ յարգաւորում բոլոր ներկերու և գորգի նկարները որոշելու համար: Պահեստի շուրջ գտնվող ազգայնականութիւնը ստանում է պատուէրներ պահեստատէրերի կողմից և պատրաստում ցանկացած ապրանքը: Սուլթանաբաթի պահեստից դուրս եկած ցիգլերեան գորգերը ձեռք են բերել Եւրոպայում հոգնակ և ծախվում են աւելի թանկ գնով, քան ուրիշների:

Նոր-Բայազէտի ընկերակցութիւնը պէտք է առանձին ուշք դարձնէ թէ նկարների ուսումնասիրութեան և թէ տեխնիկայի կատարելագործութեան վրա: Վաճառանոցը գին է տալիս որոշ նկար ունեցող գորգերին, որոնք համապատասխանում են զորգերի տիպին: Այդտեղ չէ կարելի ինքնահաճախ փոփոխութիւններ անել և զեկավարվել սեփական ճաշակով: Կովկասեան գորգերի մի մասը վերջին տարիներում հէջն այն պատճառով էլ փչացել է, որ գորգագործները խառնել են եւրոպական նկարները տեղական հին նկարների հետ, առանց որոշ տիպի հետեւելու և փոփոխութիւններ են մտցրել գոյների մէջ:

Մի քանի անգամ մեր երկրում փորձեր են արված գորգագործական արհեստանոցներ բանալ, որոնք, սակայն, չեն ու-

նեցել այնքան արդիւնաբերական, այնքան մանկավարժական նշանակութիւն: Ցանկալի է, որ Նոր-Բայազէտի արհեստանոցը կարգանայ հաստատ հիմքերի վրա գնել իր գործերը և կշռելով գործնական կենսաբան պահանջները, այնպէս կազմակերպէ արհեստանոցի ուսումը և գործառնութիւնները, որ նրանք իսկապէս նպաստեն զարգացնելու գաւառում գորգագործութեան արհեստը:

Պէտք է նկատել, որ գորգագործութեան արհեստը վաղուց յայտնի արհեստ է մեր երկրում և որ նա մեր գաւառների մի մասում ոչ թէ չէր զարգանում վերջին տարիները, այլ, ընդհակառակը, թուլանում էր և մի քանի տեղերում բոլորովին վերացել է: Այդ հանգամանքը ունի իր պատճառները, որոնց մասին մենք կը խօսենք մի ուրիշ անգամ: Իսկ այժմ ակնարկելով այդ երեւոյթի վրա, մենք հրաւիրում ենք յատուկ ուշադրութիւն ուսումնասիրելու այն պայմանները, որոնց մէջ պէտք է զարգանայ ամէն մի արդիւնագործական ձեւերակութիւն:

ՆԵՐՔԵԱՐԹԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

«Թագի համար», դրամ 5 դրոշ. 3. Կոպէկի ծրարանուս Կոպէկ մի բազմաթիւն բանաստեղծ է: Վէպերի, նորավէպերի, պատմաճշտութեան եւ ուրիշ մի շարք ճիշտագիտութեան հետ միասին նա գրել է նաեւ դրամաներ, որոնց թիւը բաւականին պատկառելի է: Շատերի կարծիքով, Կոպէկի դրամաներից ամենաաւելի «Թագի համարն» է: Այս անդուծութիւնը, ի հարկէ, յարաբերական մտքով պէտք է հասկանալ, որովհետեւ ֆրանսիացի այս յայտնի գրողը, իբրեւ դրամատուրգ, այնքան էլ նշանաւոր չէ եւ Հիւզօյից, Դիւմայից, նոյն իսկ Սարգսից յետոյ միայն կարող է յիշատակվել:

«Թագի համար»-ը պատմական բովանդակութիւն ունեցող մի դրամա է, որ ինչպէս ֆրանսիական շատ պատմական դրամաներ, գրելի չէ բոմանտիկական զարգացում հիւստեաճից: Պէտք է նկատել, որ Կոպէկ իր բոմանտիկական հակումներին բաւականութեամբ տալով համար շատ էլ անաւոյ չէ եղել ներթիւ ընտրութեան մէջ: Արեւմուտքը, ապստամբական եւ արկածախի միջին-դարը կարծէք չէ բաւականացնում նրան. եւ ահա նա իր բանաստեղծական թռիչքներով, վառ երեւակայութեան թափով տեղափոխվում է դէպի Բալկանեան թերակղզին եւ այս լեռնոտ երկրի ծերայեղում, գեղաճիծաղ Դանուբի ափերում ապրող սա-

ւանական մի փոքրիկ ազգի արեւմտեան, բայց մի եւ նոյն ժամանակ հերոսական պատմութեամբն է յափշտակվում:

Թուրքմէն թափառական ցեղերը Փոքր-Ասիան նուաճելուց յետոյ XIV դարում արդէն մուտք էին գործել Բալկանեան թերակղզին: Կոստովայի արեւմտահեղ ճակատամարտից եւ մանաւանդ Կ. Պօլսի անկումից վերջ օտաւանեան կիսալուսինը արդէն ծածկանում էր Մարմարայի ափերում: Մահմեդական նորակազմ պետութիւնից սարսափում էին ոչ միայն Բալկանեան թերակղզու բազմաթափ ազգութիւնները, այլ եւ համարեա ամբողջ արեւմուտքը: Մի բուռն սլավոններ, իրանց անառիկ լեռներում եւ ամբողջութեամբ ապստամբ, գոյութեան կռիւ էին մղում այս բարբարոս եւ հարկու ոյժի դէմ: Միջայլ Բրանկովիցը այս կողմից սլավոնների հրամանատարն է. նա տասնակի տարիներ շարունակ կռւել է աստիճանաբար դէմ եւ տաղանդաւոր զորավարի հոչակ է ստացել: Իր միակ որդին՝ Կոստանդին մանկութիւնից սկսած վարժվում է զինւորական չարքաշ կենսաբան եւ հայրենիքի պաշտպանութեան գործում շուտով դասնում է իր հօր աջ բազուկը:

Առաջին գործողութեան մէջ նա իբրեւ յաղթող հէջն նոր է վերադառնում պատերազմի դաշտից եւ թշնամու գրոշակը պարզում է հօր ոտների առաջ: Բայց կարծէ հայրը՝ հերոսութեան դառնութեան այլ եւս կարօտ չէ: Նա այժմ փառասիրական ուրիշ տենչանքներ է փայփայում: Թագաւորի մահվանից յետոյ ծերակոյտը նոր ընտրութեամբ է զբաղված. ընտրվելի թեկնածուներն են Ստեփան Եպիսկոպոսը, որ իր բարեգործութիւններով, հայրենասիրական սիրտգործութիւններով և բարեպաշտութեամբ մեծ ժողովրդականութիւն է վայելում եւ Միջայլ Բրանկովիցը՝ զորքի եւ ժողովրդի պաշտելի հերոսը: Միջայլը տաժում է մի անհուն սէր դէպի իր խորթ կինը, որ յունական ծագումից է, գեղեցիկ, բայց անառաժէր, նենգամիտ: Նրա բուռն ցանկութիւնն է առանց միջոցների խտրութեան թագաւորի պսակվել: Բազիլիդը իր այս փառասիրական անզուսպ տենչանքով իւր է ածում բոլորեղբայր կրակի վրա: Թագաւոր ընտրվելու անհաւանութեան դադարեցրել չէ բաց անում, բայց խոտտովանում է, որ ինքը անմեղ է եւ հայրենիքին հաւատարիմ: Այս խոտտովանութեան ժամանակ իր խորթ մայրը՝ չարամիտ Բազիլիդը առաջ է դալիս եւ յանձնում է թագաւորին Մուհամեդ II-ի հրովարտելու Դաւաղութեան նախադրանքին անձնօթ թագաւորը եւ զօրքը զայրոյթից կատաղում են: Կոստանդին դարձեալ անդդվելի է:

Բազիլիդը լուծում է իր վրէժը. ծերակոյտը

էր մուտք գործել Միջայլ Բրանկովիցի պալատը: Թէ Բենկոն եւ թէ Բազիլիդը լաւ են յարմարվում իրար. փոխադարձ կերպով պատրաստվում է մեղմանալութիւնների լարը: Թիւրք լրտեսը սուլթան Մուհամեդ II-ի անունով մի ֆիրման է բերում Միջայլից, որով խոտտում է տրվում այս վերջինին թագաւոր դարձնել: Եթէ միայն նա յանձն կանէ հրաժարվել իր հայրենիքը պաշտպանելու գործից եւ չի ընդդիմադրի թիւրքական արշաւանքներին: Բազիլիդը այս բոլորը հաղորդում է Միջայլից, որը երկար տատանումներէից եւ հոգեկան փոթորկից յետոյ տեղի է տալիս նենգամիտ կնոջ հրապոյրներին եւ սպառնալից թախանձանքին: Հայրենիքի հերոսն սկսում է մի եւ նոյն հայրենիքի կորստեան անդունդը փորել: Բայց անշուշտ գաւառներէից միտքը ծածկված չէ միտք: Դաւաճան հօր աջնիւ եւ մեծահոգի գաւառը տեղեկանում է այդ մասին. իր ծնողների մէջ տեղի ունեցած դաւաղութեան վերջը նա իր սեփական ականջներովն է լսում հարեւան անեակից լրտեսելով: Լրտեսելու ծանր քայլը նա հոգեկան երկար յուզմունքից յետոյ միայն համաձայնվում է անել: Երբ Միլիցան՝ մի գնչուհի, որին նա գերի էր վերցրել, եւ որը սիրում էր Կոստանդինին՝ նրա մէջ կապում է արթնանում եւ խորհուրդ է տալիս համոզվելու համար լրտեսել իր ծնողներին: Դաւաճան Բրանկովիցը Տրայանոսի կիրճի մօտ տաճկական բանակին էր ապստամբ, երբ գիշերով վրա է հասնում Կոստանդին: Նա թախանձալի պաղատանքով խնդրում է հօրից չարատաւորել իր փառքը դաւաճանի անարգ անուանով, բայց իզուր: Միջայլը անյողդող է: Հայր եւ որդին մենամարտի են ընկնում. դաւաճանը ապստամբ է Հայրապետ որդին իր կատարած «ոճիր» ոչ ոքի չէ յայտնում, որպէս զի իր հօր փառքը եւ անունն անրիժ մնայ: Նա կրում է ամէն տեսակ զրկանքներ՝ անարգանք, յանդիմանութիւն, մինչեւ իսկ լաւաճան է յայտարարվում եւ բանտարկվում: Փոփոխակի բազդից յետոյ պատերազմը վերջանում է ի նպաստ սլավոնների: Յուզված զօրքը պահանջում է «մահ դաւաճանին»: Իսկ Թագաւորը փորձում է հանդարտեցնել զրգոված ժողովրդին եւ զօրքին: Կոստանդին իր հայրապետութեան դադարեցրել չէ բաց անում, բայց խոտտովանում է, որ ինքը անմեղ է եւ հայրենիքին հաւատարիմ: Այս խոտտովանութեան ժամանակ իր խորթ մայրը՝ չարամիտ Բազիլիդը առաջ է դալիս եւ յանձնում է թագաւորին Մուհամեդ II-ի հրովարտելու Դաւաղութեան նախադրանքին անձնօթ թագաւորը եւ զօրքը զայրոյթից կատաղում են: Կոստանդին դարձեալ անդդվելի է:

Բազիլիդը լուծում է իր վրէժը. ծերակոյտը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հ. ԼԻՆՉԻ ԳՈՐԾԸ

«Սէնտ Ջէյմս Գազէտը» ապա խօսում է գրքի այլ եւ այլ կէտերի մասին, յատկապէս յիշատակելով Լինչի եօթնօրեայ կարեւոր հետազոտութիւնը Ներքին լուրերի հրաբխային բերանի ներքնակողմում, որից հեղինակը ապացուցանում է, թէ Ներքին լուրերը երկրաբանական ամենամեծ եւ նշանաւոր հրաբխային է իր տեսակի մէջ: Եւ իսկապէս, երբ ընթերցողը տեսնում է այս հրաշալի պատկերներն ու բարեկեցիկը այդ սարի վերջերի ու կատարնային ծովակի նկատմամբ, առանց կարգաւոր իսկ կարողանում է ըմբռնել, թէ պարոն Լինչ մասնաւոր ուշադրութիւն է ունեցել հայկական ազգի առաջին աւանդական այդ սարի նկատմամբ, որի կողերի վրա փռվեց Բէլը Հայկ նահապետի նետից եւ որի կատարի վրա թաղվեց նրա դիակը: Այս աւանդութիւնը, զուգէ, մութ կերպիւ մեկնում է Ներքին լուրեր:

հրաբխային ժայթքման ազդեցութիւնը հին ժամանակի ժողովրդային մտքի վրա:

«Daily News»-ի ընդարձակ յօդուածից առնել եմ բերում լուր մի քանի միջանկեալ տողեր: «Այս գործը մի ուսումնասիրութիւն է, բայց ինչպէս և խորագրին մի ուսումնասիրութիւն, թէ ուսումնական եւ թէ թրքական Հայաստանի, իր ամբողջ աշխարհ երեւոյթներով՝ աշխարհագրական, ցեղաբանական, նախասոական, պատմագրական եւ ընկերային... Ընթերցողը, լինի գիտնական թէ սովորական մի մարդ, պիտի գտնէ այս գրքում շատ բան, որը պիտի շահագործէ ու հիացնէ իրեն: Բացի այս, պարոն Լինչի գրքի վրա կայ նաեւ մի ուրիշ նորոգ, որ ուրիշ ամէն բանից աւելի է անշուշտում նրան միջին կարգի ճանապարհորդական գրքերից: Մարդկային ընդարձակ ու հարազատ գգացումն է այդ, որը տիրում է հատորների մի ծայրից միւրը: Այս գգացումը ակնյայտնի է ամենուրեք՝ քաղաքային պատմական արարածութիւնների մէջ, տիպերի ու անհատների ընտրի նկարագրութեան մէջ, կողմից նրանք ունեն հոգու սքանչելի յատկութիւններ եւ բնաւորութեան ընտրի գծեր, որոնք գերազանց են կայունացնում նրանց իրանց ընտր մրցակիցներէից: Այս աւելի է ի-

նաւանդ, լինովին մարդասիրական դիրքի մէջ դէպի ճնշեալ փոքր ազգերը: Այս վերջինը յատկապէս արժանի է շնորհակալութեան ձառնապահորդներ, ընդհանրապէս, նոյն իսկ երբ համակիր են այս ազգերին՝ նրանց նկատմամբ ցոյց են տալիս ուրիշ ոչինչ, բայց եթէ արգահատանք, մի չոր ու ցամաք խղճահարութիւն: Այդ այն տեսակի արգահատանքներից է, որ մարդ գգում է մի ողորմելի շան նկատմամբ՝ բարեգործութեան ու զգուշանքի մի խառնուրդ եւ իր սեփական անձի գերազանցութեան մի գիտակցութիւն: Պ. Լինչի ընթացքի մէջ ընաւ չը կայ այդ արհամարհական ոգին... Նա սակայն ամենեւին աչքը չէ փակում հայերի հոգու եւ բնաւորութեան մոլորութիւններէի եւ պակասութիւնների նկատմամբ: Նա ինքն էլ է զոհ դարձել այդ ցեղի մի անհատի մասնութեանը, բայց ներողամտութեամբ է վերաբերվում դէպի այդ, որովհետեւ դարաւոր ստրկութիւնը, ասում է, նրանց վրա գործել է իր անխուստփելի արատները: Միւս կողմից նրանք ունեն հոգու սքանչելի յատկութիւններ եւ բնաւորութեան ընտրի գծեր, որոնք գերազանց են կայունացնում նրանց իրանց ընտր մրցակիցներէից: Այս աւելի է ի-

րաւունք տալիս հեղինակին ցաւակցելու նրանց ճակատագրին, եւ ցանկալու, որ մի շուտ լուծումն տրվի հայկական հարցին՝ եւսրոպական դիւանագիտութեան այդ արհեստանոց վերջին...»:

«Evangelical Alliance Quarterly» գրում է. «Այս երկու փառաւոր հատորները, որ լոյս տեսան բաց դեղին, կապոյտ եւ ոսկի գոյնեւորով, ընդերկար պիտի մնան իր օրինակելի հեղինակութիւն ծարի եւ Սուլթանի այս յարակից երկրների վերաբերմամբ: Հայկական մեծ կոտորածը մղումն տուեց Լինչին հաւաքել ամենամեծ կարեւորութիւն ունեցող տեղեկութիւն բազմազան նիւթերի մասին: Դիւտութեան մարդը, պատմաբանը, ջաղաքագետը, աշխարհագրագետը, լեռնաբանը, եւ ոչ նուազ նաեւ աստուածաբանը, պիտի գտնեն այստեղ թանկագին ծանօթութիւններ հաւաքված խնամքով ու ճշգրտութեամբ եւ նկարագրված ամենահետաքրքրական եւ հաճախ իր եղանակով Հեղինակի ոճ, անորմեղի է եւ բնական, անթերի է կեանքի ու տեսարանների նկարագրման մէջ, պատկանելի ու անկողմնակալ է պատմութեան մէջ, զգուշաւոր եւ խորհրդածող է քաղաքական բաժիններում, ճշը-

Թագաւորի նախագահութեամբ վճռու է պատ-
ժել Կոնստանդինոն ոչ թէ մահապատժա-
տելով, այլ իր «հայրենասէր» հօր արձանի
պատուանդանին շղթայելով՝ իբրեւ անարգանք
եւ նշաւակ իր «գաւառական» արարքներէ։ Բայց
կոյր «արդարադատները» երկար չեն կարող
հրճվել։ Միլիցան դառն չեղածով յայտարարում
է, որ Կոնստանդին անմեղ է եւ նրա տանջան-
քին վերջ տալու համար սպանում է նրան այն
դաշտով, որ իբրեւ սիրող նշան նա ընծայ էր
ստացել Կոնստանդինից։ Միլիցան դաշտին մի
ուրիշ հարուածով էլ իր կեանքին է վերջ տալիս։
Իբրեւ զրաւատուրդ Կոպլէն փայլում է
Ֆրանսիական առանձնայայտութիւններով՝ ար-
տաքին շարժուցիչ վայրկեաններով, հոգեկան
սուր հակադրութիւններ ընդհարումով, մի
քիչ արուեստական, փնտոված բարդութիւն-
ներով։ Ինչ վերաբերում է դրամայի, այսպէս
ասած, բարոյականին, առաջնորդող տենդեն-
ցիային՝ պէտք է նկատել, որ Կոպլէն մի քիչ
վերանուն է իրականութեան հողից, անբնա-
կանութեան սահմաններին է մօտենում։ Այն
տեսակ որդիական սէր եւ մեծահոգութիւն,
ինչպիսին Կոնստանդին է ցոյց տալիս, իբրեւ ոչ
միայն հազուադէպ, այլ եւ անբնական է։
Անբնականութեան չունէլ է փշուռ որոշ չափով
նոյն իսկ Բագրիդիդի դէմքից։ Այս դէպքում
սակայն մօր խոստարտութիւնը Կոպլէն մեղ-
մացնում է գոնէ խորթութեան աստատով։
Միւս կողմից՝ անուրանալի է, ի հարկէ, որ
կանայք պատմութեան մէջ երբեմն աչքի ընկ-
նող դեր են կատարել՝ մանաւանդ իբրեւ սուր
բարդութիւններ եւ որոգայթների զսպանակ։
Բայց 20—30 տարի հայրենիքի պաշտպանու-
թեան վեհ գործին նուիրված մի հերոսի դա-
ւաճան դառնալը դարձեալ չափազանցաբար
է, այն պարզ պատճառով, որովհետեւ Բրան-
կովիւրն այլ եւս երիտասարդ չէր, առնական
հասակումն էր՝ հետեւաբար կանացի հրապու-
րանքների վերաբերմամբ բաւական դիմաց-
կուն Երիտասարդ, կրակոտ նապօղծներ եղիպ-
տական արշաւանքների ժամանակ երբեմն իր
ազգապաշտպան պարագլուխները թողած՝
Ժողովին սիրով էր տառապում, բայց
նոյն նապօղծն էր քանի տարուց յետոյ կա-
նանց նկատմամբ բոլորովին ուրիշ դէմք էր
ցոյց տալիս։ Ուսումնաճի բացառութիւններն
ի հարկէ մենք չենք կարող բացատրել, բայց
մեր նկատման էր միմիայն վերոյիշեալ հոգե-
բանական արգելափակ ժամանակի անկը։
Խաղն ընդհանրապէս աղօղ անցաւ։ Գլխա-
ւոր դերակատարներից տրիկին Սիւրանոյ, պ.պ.
Պետրոսեան եւ Արէլեան փայլուն կերպով տա-
րան իրանց դերերը։ Սիւրանոյ էլ իրանց իսկական
գերումն էին, տրիկին զնչուեւ կրակոտ սէրը
եւ կարեկցութեան բուռն զգացմունքը շատ
լաւ արտայայտեց մանաւանդ վերջին տեսա-
րանում։ Պ. Պետրոսեանը՝ իբրեւ Միլիցայի
Բրանկովիւր, աչքի էր ընկնում Բագրիդիդի թա-
խանձանքին զիջանելիս։ Պ. Արէլեանը կատա-
րում էր Կոնստանդինի դերը։ Երիտասարդ իշ-
խանի սեփականութիւնը, հայրենասիրութիւնը
եւ հայրական սէրը սկզբից մինչեւ վերջ նա
փայլուն կերպով գիտէր պատկերացնել։ Պ.
Աղայեանի Ստեփան եպիսկոպոսը նոյնպէս ա-
ղօղ էր. պ. Վրոյրի Բէնկօն շատ կենդանի էր
եւ լաւ։ Միւս դերակատարներից վատ չէին
պ.պ. Ալիխանեան (Լազար) եւ Ստեփանեան

(Ուրոյ)։ Տրիկին Փառանձմի Բագրիդիդի մեղ չը
բաւականացրեց։
Թատրոնում այս անգամ բաւական հասա-
րակութիւն կար։

Վ. Նալբանդեան

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Հոկտեմբերի 11-ին

Անցեալ ամիս, որպէս լուր, լրագրիւններում
յայտարարված էր, թէ առաջիկայ նոյեմբեր
ամսին ենթադրվում է նշանակել արքունական
նաւթային հողերի Վ հերթի աճուրդը։
Ներկայ դրամական ճգնաժամին, երբ կան-
խիկ դրամ չը կայ, երբ արդիւնաբերները մեծ
զոտարութեամբ են կարողանում մի կերպ
իրանց գործերը քաջքել, երբ արդիւնաբերած
նաւթի քանակութեան մի մասը համարեա թէ
անվաճառ է մնում, իսկ ծախվածն էլ այն
գներով է, որ միմիայն վնաս է պատճառում
արդիւնագործին, հաղիւ թէ աճուրդի լուրը
զրկաբաց ընդունվէր մեր արդիւնագործների
կողմից։ Եւ այդպէս էլ եղաւ։ Մի քանի նաւ-
թարդիւնաբերական Ֆիրմաներ գրաւոր կեր-
պով դիմեցին տեղական բօրայի վարչութեանը,
որ վերջինս դիմէ մինիստրութեան խնդրեով,
եթէ հնար է յետաձգել նաւթային հողերի ա-
ճուրդը անորոշ ժամանակով, մինչեւ որ ներ-
կայ ճգնաժամը անցնէ եւ նաւթի գները բարձ-
րանան այն աստիճան, որ գոնէ կարելի լինի
առանց վնասի գործել։ Այդ դրութեան մէջ, ի
միջի ալլոց, ասված է, թէ ներկայ ճգնաժամը
այն աստիճան աստիկ կերպով է աղքատ մի-
ջակ եւ փոքր արդիւնագործների վրա, որ հա-
ղիւ թէ նրանցից մէկը կարողանայ մասնակցել
աճուրդին։ Այդ հանգամանքից օգտվելով, մեծ
Ֆիրմաները կարող են շատ չնչին գներով վերց-
նել ամենալաւ հողերը, եւ արդիւնաբերելով
այդ հողերից մեծ քանակութեամբ նաւթ, աղ-
ղել առանց այն էլ ընկած գների վրա։

Բօրային վարչութիւնը, գտնելով այդ խն-
դիրը կարեւոր եւ մեծ ուշադրութեան արժանի,
բօրայի անդամների ընդհանուր ժողովը հրա-
ւերեց, որպէս զի իմանայ ընդհանուր տրա-
մադրութիւնը։ Այսօր տեղի ունեցաւ այդ ժո-
ղովը եւ ներկայ եղողները միաձայն որոշեցին
որքան կարելի է շուտով դիմել մինիստրու-
թեան, որ աճուրդը յետաձգվի, սակայն խն-
դիրը պատճառաբանել աւելի ուժեղ եւ հա-
մադիշ փաստերով, որովհետեւ տէրութեան հա-
մար մի եւ նոյն է թէ ով կը տայ նաւթային
հողերի վարձը։ Մարկոսը արդեօք, թէ կի-
րակոսը։

Բաւական է արդէն մատնացոյց անել, որ
արդիւնաբերած նաւթի մի մասը անվաճառ է
մնում, պահեստները լի են, շատ հանքերում
գործերը դադարեցած են, որովհետեւ աղ-
ղանք գին չունի եւ ներկայումս նաւթարդիւ-
նաբերութեան մեծամեծ վնասներ են անում։

Մենք հաւատացած ենք, որ եթէ այդ հա-
նգամանքների վրա լուրջ ուշադրութիւն դարձն-
վի, անպայման աճուրդը կը յետաձգվի, եթէ
մինչեւ անգամ նշանակված էլ լինի։

Ֆ. Մարգարեան

ՆԱՄԱԿ ԽՐԱՄԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, հոկտեմբերի 9-ին
Շտապում եմ մի երկու խօսքով պատա-

պիսիւններն առիթ է ներկայացնում կատա-
րեալ զաղափար առնելու այդ ազգի պատմու-
թեան, հնարածութեան, եկեղեցու, սովորու-
թիւնների, աշխարհագրութեան եւ երկրաբա-
նութեան մասին։ Պ. Լինչի ուսումնասիրու-
թիւնները արդիւնք են շատ տարիների ճանա-
պարհորդութեան եւ հետազոտութեան՝ առաջ-
նորդած գիտական ուսումնասիրութեան հա-
րազատ սկզբունքով։

Ընդհանուր կերպով նմանօրինակ կարծիք-
ներ են յայտնում բոլոր միացեալ թերթերը
սակայն այդ ամեն քննադատական յօդուածնե-
րից նշարվում է, որ միայն ազատական կու-
սակցութեան թերթերն են անհրաժեշտութեան
նում հայ ցեղի անուղղված բնաւորութեան
հանգամանքի նկատմամբ, եւ կարծես աւելի
տրամադիր են երեւում ընդունելու, թէ հայե-
րը այնքան արդարացի չեն իրանց բնաւորու-
թեան զեղծման մէջ, որքան պ. Լինչ ներկայ
ացնում է։ Եւ «Daily Chronicle» մինչեւ իսկ չէ
ընդունում, թէ հայերը քաջաբան ցեղ են
նոյն իսկ լաւ հանգամանքների տակ, ինչպէս
պ. Լինչ ուզում է պայցուցանել, թէ հայերը
նուազ իշխանութեան տակ զանազան առիթ-
ներում ներկայացրել են անհատական եւ օ-
սարակական քաջասիրութեան բազմաթիւ օ-

խանել բժշկապետ Բաբայանի՝ «Մշակ» №
227-ի մէջ տպած նամակին, որով ուզում է
ապացուցել, թէ եւ ճիշդ չեմ ներկայացրել
բժշկական համաժողովի այն նիստի պատկերը,
որի մէջ զօկոսոր Գօպաձէն կարգաց իր զեկու-
ցումը Արաւթումանի՝ իբրեւ կլիմայական կու-
րօրտի մասին։

Բժ. Գօպաձէն Արաւթումանի հիւանդանո-
ցի գլխաւոր բժիշկն է։ Հետեւաբար եթէ ես
մի զեպքի առիթով կարող էի սուրբ եկտիվ
վերաբերվել դէպի այդ խնդիրը, նա էլ չը
պէտք է գերել ինի այդ սուրբեկեղծութիւնից։
Իսկապէս բժ. Գօպաձէն զեկուցումից ստացած
տպաւորութիւնը այն էր, ինչ որ արտայայտեց
բժ. Արաւթումանը, թէ «մենք լսեցինք միմիայն
զովասանը, բայց միթէ Արաւթումանը բացա-
ւական կողմից չունի։ Եւ դուրս եկաւ, որ
ունի։ Ինքը, բժշկապետ Բաբայան, իբրեւ
Արաւթումանի բժիշկ, յայտնեց, որ, օրինակ,
չբարութեան մասը անբաւարար է (կարծես
ասեց. «բոլորովին հնացած ու անպէտք») ու
պահանջում է վերաշինութիւն, եւ որ ուղի-
ները խանգարված են, բարձի թողի արած
(պէտք է ասած, որ ուղիները անապահ չնա-
նախութիւն ունեն լինելու կուրօրանքում)։
Բժ. Պատիւրիւովը նախաձեռնեց այդ պա-
նեցեցիկայի դէմ եւ ասեց, որ Արաւթումանը
մի կիրճ է, եւ արեւային եղանակները այնտեղ
պակաս են, քան Կիսլոյօղլուում, որը ընդար-
ձակ, լայն, բաց տեղ է եւ միշտ ողողված ա-
րեւով (այնքի բառերը սրանք չէին, բայց միտ-
քը այս էր)։

Յետոյ կային բժիշկներ, որոնք ինչպէս ես,
չը վիճեցին, բայց մասնաւոր խօսակցութեան
մէջ նոյնպէս բժ. Գօպաձէն զեկուցումը միա-
կողմանի գտան։

Այս բոլոր իրաւունք տուեց ինձ ասելու,
թէ ընդհանրապէս թերեւեալ պակասեցին ժո-
ղովականների աչքում Արաւթումանի նշանա-
կութիւնը (այն չափազանցաբար, ըստ իս, նշա-
նակութիւնը, որը կամեցաւ տալ նրան բժ.
Գօպաձէն), որ եւ արտայայտեց, կարծեմ, բժ.
Արաւթումանը. այդ չէ նշանակում թէ Արաւ-
թուման չէ կարող լաւ կուրօրտ դառնալ, եթէ
լաւ կազմակերպվի։

Թերեւեալ թերեւեալ առաջն առնելու հա-
մար ասեմ, որ յարգելի բժշկապետի յիշած
«ցաւայի յիշողութիւնը», որը իբր թէ վատ է
տրամադրել ինձ դէպի Արաւթումանը, — այդ
իմ քրոջ որդու մահն էր, բայց այդ դէպքը
որչպիսի էր ցաւայի լինելը ինձ համար, այնու-
ամենայնիւ անկարող էր որ եւ կերպով
խախտել իմ անաչառ վերաբերմունքը դէպի
մի գիտնական խնդիր։

Բժ. Վ. Արծրունի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Կիրակի օր, հոկտեմբերի 14-ին, բացվեց
գինեգործական ժողովը։ Ագրոնոմ. Վ. Ստարո-
սելսկի, բանալով ժողովը, յայտնեց, որ ժողովի
պարտականութեան կատարել կը լինեն միայն
այն ժամանակ, երբ ժողովին կը մասնակցեն
իսկական գինեգործներ, որոնք գործական
կերպով պարագլուխ են այլեգործութեամբ եւ
գինեգործութեամբ։ Ժողովի բացումը չնորհա-
ւորելին Սուլիսան-Կրիմ-Գրիշ՝ այլեգործական
ընկերութեան կողմից, Բազումովի Սոյի Գիւ-
ղատնտեսական ընկերութեան, Կամենեկի
Գաւառի Գիւղատնտեսական ընկերութեան
կողմից։ Երկուսն էլ օրվանից սկսվեցին ժո-
ղովի կանոնաւոր նիստերը, որոնք պէտք է
շարունակվեն մինչեւ հոկտեմբերի 20-ը։

Կիսկից ստացանք հետեւեալ հեռագիրը.
«Հաւաքվելով գրական երեկոյթի, որ նուր-

րիակներն եւ թէ անիրաւ է անգլիական եւ
եւրոպական այն ընդհանրական կարծիքը, թէ
հայերը երկչու ցեղ են։

«Standard» իր մի երկրորդ եւ խիստ ըն-
դարձակ յօդուածում այսպէս է խօսում վերո-
նշանակեալ խնդրի մասին. «...Ինչ չէն այն
անգլիացիները, որոնք հրապարակում են նը-
րանց (հայերին) իբր խաղախ-խաբեաներ,
պարզապէս այն պատճառով, որ Թիւրքանայ-
աստանում նրանք գտել են հայ թարգմանի
անսովոր կերպով խորամանկ եւ անխիղճ նը-
մոյշներ։ Պ. Լինչ, իբր հետեւանք ընդարձակ
եւ երկարատեւ ճանապարհորդութեան, որը
նա ձեռնարկել է առանց որ եւ կանխակա
դիտումների ի նպատակ նրանց, հասել է ներ-
հակ եզրակացութեան։ Այս ժողովրդի իսկա-
կան արժանիքը գնահատելու համար, անպատ-
ճառ պէտք է ուսումնասիրել նրան ոչ թէ Լի-
վանում, իր լայնափնէ ուսակականութեամբ,
այլ Հայաստանի ուսական գաւառներում...
Հայը այնքան լիովին ճարպիկ է՝ քրքան յոյնը,
բայց աւելի հեռատես է եւ աւելի պարկեշտ,
միայն թէ հազար տարվայ հպատակութեան
հետեւանքով, բնականաբար, չէ կարողացել
զերծ միալ ծառայական ցեղերի յատկանիշնե-
րից»։ Հայոց ճակատագրի մասին խօսելով ա-

ված է Պատկանեանի յիշատակին, պարտք ենք
համարում ողջունել արձանի բացումը։ Բեալ-
ցիայի այս ծանր օրերում թող մեծ բանա-
տեղի յիշատակը ամրապնդէ հաւատը դէպի
հայ ազգի այն իդէալները, որոնց արտայայ-
տին էր Գաւառ-Բաթիպան։ Ուսումնորութիւնը։

Տնայնագործական ժողովը վերջապէս հոկ-
տեմբերի 13-ին Վերջին նիստում քննութեան
ենթարկվեցին այն միջոցները, որոնցով կարե-
լի է զարգացնել տնայնագործութիւնը մեր
երկրում։ Այդ միջոցների թուումն են ինս-
տրուկտօրներ հրաւիրել, արհեստանոցներ չի-
նել, վարպետներ պատրաստել, վաճառանոց-
ների ուսումնասիրութիւնը, կովկասեան ար-
դիւնքների նմանների ուղարկել այս ու այն
կողմ, կատարելագործված գործիքներ մտցնել,
Ժողովի մէջ միտք յայտնվեց, որ կովկասեան
Գիւղատնտեսական ընկերութիւնը աշխատէ
յատուկ մարդիկ ուղարկել այն ընդհանուր հա-
մառուական տնայնագործական ժողովը, որ
պէտք է կայանայ առաջիկայ մարտ եւ ապրիլ
ամիսներին Պետերբուրգում՝ պաշտպանելու
Կովկասի տնայնագործութեան շահերը։

Լուում ենք, որ հայ գերատնական խումբը
որոշել է դադարեցնել հայոց ներկայացուցիչներ
Թիֆլիսում եւ գնալ Բազում, կանխապէս մի
քանի ներկայացուցիչներ տալով Սրեւանում։

Կովկասեան յօրեկանական ցուցահանդէսի
վարչութիւնը, ուշադրութեան առնելով, որ
հինգաթիւ օրերը շատ քիչ այցելուներ են լի-
նում ցուցահանդէսում մուտքի վճարը համե-
մատաբար թանգ լինելու պատճառով (50 կո-
պէկ), մտադիր է այդ օրն եւս, միւս օրերի
նման, մուտքի վճարը նշանակել 20 կոպէկ։

Կիրակի օր, հոկտեմբերի 14-ին, Արտիստա-
կան ընկերութեան թատրոնում Վօլգինայի
խումբը ներկայացրեց «Կայսրի որդի Աւետ-
րեական Դօն Ժուռն» պիեսը։ Դերասանուհի
Տիրապօլսկայա հրէուհի Ֆլորինայի դե-
րում ցոյց տուեց սիրող, տանջվող, պատուա-
զգաց օրիորդի տիպը, որ գիտէ անձնուրու-
թեամբ զոհել իրան եւ թոյլ չը տա վերաւո-
րելու իր անհատականութիւնը եւ ազգայնա-
կան պատիւը։ Դօն Կլիմասայի դերում լաւ
էր Մակիմով, բայց նա իր դերին տալիս է
չափազանց կոմիքական ձեւ։ Դօն Ժուռնի
դերում Պետիպա ներկայացրեց ջանիլ գրաւվող,
պատերազմասէր, անձնուէր երիտասարդի տի-
պը միջակ աղջկութեամբ։ Թատրոնը համարեա
լիքն էր։

Մօսկվայի լրագրիւնների ասելով, ներքին գոր-
ծերի մինիստրութեան մէջ ձեռնամուխ են ե-
ղել մշակելու նոր կանոններ, որոնցով մու-
րացկանութիւնը Ռուսաստանում պէտք է հա-
մարվի քրէական յանցանք եւ պատժվի այդ
յանցանքների համար նշանակված պատիժ-
ներով։

Ժողովրդական լուսաւորութեան մինիստ-
րութեան գիտնական կոմիտէն առ օրերում
բացատրեց, որ ընտանեկան կրթութիւն ստա-
ցած եւ ապա կանանց պրօգրիմագիտներում
վերջնական քննութեան ենթարկված անձինք

սում է. «Տարակույս չը կայ, թէ հայկական մի
նոր թագաւորութեան գաղափարը յղացել է
Կովկասի ժողովրդի մեջում, բայց պարագ մի
երազ է այդ։ Մի եւ նոյն ժամանակ, անկարե-
լի է չը գնահատել երկու կայսրութիւնների
օսանականութիւն վրա ընկած այդպիսի մի ժող-
վրդի տենչանքը... Մօսկուայից արեւելքի
ապագան ինչ բազմի է որ վիճակված լինի,
գոնէ այսօրեան հաւատով է, թէ հայերը ներ-
չնչված են այնպիսի յատկութիւններով, որ
գերագոյնութիւն պիտի տան նրանց, ոչ, գու-
ցէ, որպէս հասարակութիւն, այլ որպէս ան-
հատներ, հիւսիսային մեծ կայսրութեան իշխա-
նութեան տակ»։

Պ. Լինչ հայերին նկատում է, իբրեւ միակ
տոկուն ժողովուրդը Փոքր Ասիայում, եւ ա-
տում է, թէ եթէ երբ եւ ինչ Թիւրքիայի հայ-
երին վիճակվի ընկնել ուսաց տիրապետու-
թեան ներքեւ, իբր միակ կորովի եւ ծաւա-
լուն ցեղը կայսրութեան այդ մասում, անծա-
պէս կարող են օգտակար դառնալ քաղաքակը-
թութեան զարգացման, մանաւանդ եթէ կա-
ռավարութիւնը հրաժարվի իր արդի ուսաց-
ման սխալներից։

Պ. Տօնապետեան

իրաւունք ունեն տարրական ուսումնարաններ
իր ուսուցչուհիու կողման վկայական ստանալու
Հոկտեմբերի 8-ին Պետերբուրգի անթրոպո-
լոգիական ընկերութեան մէջ, լրագիրները
խօսքով, տեղի ունեցաւ մի հանդիսարան նիստ
ի պատիւ Բուրգովի Վերլուծութեան Բաժնի
ված էր կանանց բժշկական կուսակցութեան
դուրսդնելով, համալսարանի եւ գիտութեան
բժշկական ակադեմիայի ուսանողներով, կային
լատ պրոֆէսորներ, բժիշկներ եւ օտար հասա-
րակութիւն: Բոլոր գեկուցումները այդ երեկոյ
նուիրված էին Վերլուծութեան, որպէս անթրոպոլոգի:

Բոստովից «Ручка. Вѣд.» լրագրին հեռա-
գրում են, որ առեւտրական դպրոցի հայերին
ֆինանսները միմիայնութեամբ թոյլատրել է
սովորել աղօթքները հայերէն լեզուով, բայց
պէտք է գիտենան ուսուցիչներ թարգմանութիւնը:

Տեղական լրագիրները ասելով, Թիֆլիսի ա.
Նուռէի ուսումնարանը կը վերածվի օրինորդա-
կան ինստիտուտի, պետութեան մէջ գոյու-
թիւն ունեցող օրինորդական միւս ինստիտուտ-
ների նման:

ՆՈՒԽՈՒԹ մեզ գրում են. Ալյատեղ, հոկտեմ-
բերի 5-ին, բացվեց քաղաքային Պուշկինեան
հիւանդանոցը:—Միջանկերը սաստիկ անձրե-
ւային են. մթերքները սաստիկ թանգ:

ՂՈՒԲԱՅԻԹ մեզ գրում են. «Աֆորիզմ
գիւղացի Սէիդ-Կէիւ-Հալի-Մէհդի-օղլու կինը»
Գիւլլաթ-Միւրադ-ղլին սիրային յարաբերու-
թիւններ է ունենում իր գիւղացի եւ տաղեր-
որդի Շամիլ-Մուստաֆա-օղլու հետ: Գիւլա-
թիւնը այդ բանը իմանալով՝ յայտնում են
խաբված ամուսնուն, բայց աս չէ հաւատում,
եւ կամենում է անձամբ ստուգել գործի էու-
թիւնը. այդ նպատակով մի օր յայտնում է
իր կնիքը, որ հետանում է անից եւ մի քանի օր
տուն չէ վերադառնալու: Կինը հաւատում է
ամուսնուն, եւ իր սիրահար Շամիլին հրաւի-
րում է իր տուն, սիրային այցելութիւն է նը-
շանակում նրան: Ամուսինը տեսնում է
ծածուկ կերպով այդ բանը, թէ ինչպէս մտաւ
իր եղբորորդի Շամիլը նրա կնոջ մօտ. կարծ
միջոցից ինքն էլ է մտնում նրա ետեւից: Սե-
նակ մանկին ակամատես է լինում հետեւեալ
տեսարանին. Շամիլ-Մուստաֆա-օղլին—գրկա-
խառնած Գիւլլաթի հետ, պառկած է անկողնում:
Դժբաղդ ամուսինը թողնում է զբաղաւորնե-
րին, հետանում է սենեակից, վճռելով երկուսին
էլ սպանել: Հետեւեալ առաւօտ, ապրիլի 23-ին,
խաբված ամուսինը առաջարկում է Գիւլ-
լաթին դնալ իր հետ միասին Ձիչի դիւղը
եղապրների տուն, բայց նա համաձայն-
վում է զնալ Շուտով գիւղը իր բարե-
կամեանքի տուն Գնում են. գիւղից դուրս գա-
լուց մօտենում են անտառին, ուր քաղում է
Կէիւրը Գիւլլաթին եւ արով նրա պարանոցը կրտ-
նում է. յետոյ երկու մահացու վերք է հասց-
նում կրծքին եւ որովայնին թաղելով իր այդ
զոհին ջրով ծածկած փոսի մէջ, նա վերցնում է
հրացանը, գնում է միւսի՝ իր կնոջը հրապու-
րողի մօտ՝ «հաչելը վերջացնելու»: Այդ էլ է
աղօթքում նրան: Ապրիլի 24-ին Սէիդ-Կէիւրը
գտնում է գիւղական լուսկան Շամիլին դաշ-
տում խոտ հնձելիս: Երկուսը չէ մտածում, ուղ-
ղում է հրացանը եւ պարպում. գնդակը զարն-
վում է կտուր, բայց չէ սպանում նրան. յե-
տոյ փախում է, կամենալով աւազակ դառնալ:
Երկու եղբոր Շահ-Վէլլաթ եւ Լեւաթի-Ուստա-
րալապ որդիները աղօթքում է ըննել Կէի-
րին, որին ջնջիչը բանալիներից Մեղադրական
ակտը այդ գործի մասին ստացված է. նրա
մէջ մեղաւոր է ճանաչված եւ Թալաթի գիւ-
ղից՝ Համիդ-Հալիլ-օղլին, որը տեղ էր տուել
պատապարկելու յանցագործ Սէիդ-Կէիւրին, եւ
նրա զենքերը թաղելով էր իր տանը:

ԳԵՏԱՐԻԿԻԹ մեզ գրում են. Անձրեւները
ձեռք չեն վերցնում մեղանից: Ահա երկու ա-
միս է, որ երկինքը ծածկվել է մեղանից: Տները
փուլ են եկել անձրեւից: Գէտարեկի մօտ գրան-
վող գիւղերում ցամաք տուն չէ մնացել. կա-
րելի է ասել, որ գիւղերի փողոցը ցամաք է,
քան թէ աները:

ՆՈՒԽՈՒԹ մեզ գրում են. «Ղարաբաղի կօն-
փատորայի հրամանով արձակվելին տեղիս
հայոց հոգեւոր կառավարութեան անդամները
Մեարով քահանայ Քէլիսայանց եւ Մեղրիս-
զիկ քահանայ Յովսէփեանց, որոնք մեղա-
դրվում են հոգեւոր կառավարութեան փողոցը

իրաջնելու մէջ: Հասարակութեան արդար բո-
ղոքը վերջապէս լսելի եղաւ թեմական իշխա-
նութեան առջ, Հոգեւոր կառավարութեան
նախկին անդամ տէր-Սիմէօն քահանայ Տէր-
Պողոսեանից էլ խօսիւ պահանջվում է 413
բուլլի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՏԱՍՏԱՆԻԹ

Թաւրիզ, սեպտեմբերի 27-ին
Ներկայ սեպտեմբերի 1-ից Թաւրիզը մէկ
ուսումնարանով էլ հարստացաւ: Դա կաթօլիկ
միաբնակներն ուր հիմնած գաղութն է:

Ձը նայելով նշանակված թանգ թոյակին,
համեմատութեամբ մինչեւ այժմ գոյութիւն
ունեցող միւս դպրոցների հետ եւ դպրոցում
տիրող խորթ կարգերին, ծնողներից շատերը
իրանց որդիներին այդտեղ ուղարկեցին: Նը-
րանք մեծ մասամբ ի նկատի են ունեցել ֆը-
րանսերէն լեզուի գործնական ուսումը, որ
տալիս է նոր դպրոցն իր աշակերտներին, առ-
կայն առանց մի որոշ մեթոդի:

Աշակերտները թուով մօտ 60 հոգի են, ո-
րոնցից մի երկուսը ձեռի համար ձերբակալու-
մի քանիսը գիշերօթիկ (արանք գաւառիցն են
եւ հոգեւոր կօչումն ընդունելու համար են
պատրաստվում), մեծ մասը ցերեկօթիկ, իսկ
փոքր մասը միայն յաճախող (մասնաւորապէս
ֆրանսերէնի համար): Դասերն արդէն սկսվել
են: Լեզուներից սովորեցնում են հայերէն, ֆը-
րանսերէն, ռուսերէն եւ պարսկերէն ու մի
քանի ուրիշ առարկաներ:

Այդ դպրոցում եղող աշակերտների ծնողնե-
րը պէտք է երկու բանի վրա լուրջ աշխատու-
թիւն դարձնեն: Նախ՝ իրանց մանուկները ա-
ռողջութիւնն ի նկատի առնելով՝ պիտի փո-
խել քանի այնտեղ տիրող հակամանկավարժա-
կան մի կարգ—առաւօտեան ժամի 6-ից մին-
չեւ երեկոյեան ժամի 7-ը երեխաներին բան-
տարկած պահելը եւ անընդհատ աշխատեցնելը:
այնուհետեւ աշխատել չէգործացնել կաթօլիկա-
կան աղքատութիւնը: Շատ պարզ է, որ նրանք
միշտ կաշխատեն իրանց սարկի մէջ կաթօլի-
կական ոգի մտցնել եւ հէնց այդ պատճառով
էլ, որպէս զի դրսի հետ ոչ մի յարաբերու-
թիւն չունենան, նրանք աշակերտներից պա-
հանջում են ամբողջ օրը, նոյն իսկ կիրակի օ-
րերն էլ ժամը 6-ից դպրոցում գտնվել մինչեւ
երեկոյ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

—Ֆրանսիական լրագիրներին հաղորդում
են Հոտմից, թէ պապի առողջութիւնը լուրջ
երկուց է աղքատ նրա չընկալաւորներին:
Պապի թուրութիւնը օրէցօր սաստկանում է:
Հայ օւտեթիւն նա մեծ դժուարութեամբ կա-
րողանում է բերանը տանել կերակուրը եւ
խմելիքը եւ, փոքր երեխայի նման, ամեն ինչ
թափփում է: Նա արդէն չէ կարողանում
գրել ընտել ձեռքին եւ իր անուան երեք տառը
ստորագրելը որ եւ է գրութեան տակ նրա հա-
մար անագին աշխատանք է: Նրա հետ յաճախ
պատահում են ցնկոտութեան եւ ուշաթափու-
թեան դէպքեր: Նրան թողնում են ներկայա-
նուում միայն այնպիսի անձեր, որոնց համեմ-
տութեան վրա կարող են լիովին յոյս դնել:
Այժմ լուրերն են տարածում, թէ պապը աշխա-
տում է մի նոր ընդհանրական թղթի վրա:
Արեւելքում տեղի ունեցած անցքերի առթիւով,
բայց պապի առողջութեան դրութեանը մօտ
ծանօթ անձինք խիստ թերահաւատութեամբ
են վերաբերվում այդ լուրերին: Կարգինալա-
կան չընկալաւորում արդէն ետանդով պատրաս-
տութեան են տեսնում նոր պապի ընտրու-
թեան համար, թէպէտեւ կարող է պատահել,
որ Լէօն XIII էլի մի քանի ամիս ապրի:

—«Temps» լրագիրը հաւատացնում է, թէ
նայելով Պետերբուրգի պաշտօնական չընկալա-
ւորութեանը տեղեկութիւններին, այն լու-
րերը, որոնք տարածված են վերջին ժամա-
կաները յեղափոխական շարժման մասին
Պարսկաստանում, անհիմն են: Կարգինալ
հաղորդութեանը Պարսկաստանում ոչ մի տեղ չեն
խանգարվել եւ աղքատներին յայժմ այն-
տեղ աւելի հանգիստ է, քան եղել է երկար
ժամանակ, չնայել այն բեթօրմիներ, որ իրա-
գործել է այժմեան Շահը Եւրոպայից վերա-
դառնալուց յետոյ: Շահը մի քանի անգամ
յայտնել է իր գոհունակութիւնը մեծ-վիզիրին
Պարսկաստանի այժմեան խաղաղ վիճակի վե-
րաբերմամբ, այնպէս որ այժմ չէ կարելի պա-
սել նշանակաւոր փոփոխութիւնների պարսկա-
կան կենտրոնական վարչութեան բարձր պաշ-
տօնեաների մէջ:

—«Temps» լրագրի թղթակիցը հաղորդում է
Բերլինից, թէ Պրինստանից Գերմանիա հասած
«Tucuman» շոգենաւը բերել է իր հետ մի
տարօրինակ յաղթանշան—յինացի այն գիւղացի

զուլուր, որ սպանել է գերմանական դեպա-
նէտէլէրին: Ձիւնուորի գուլուր ուղարկված է
Բերլին:

—«Manchester Guardian» լրագրին, թէ երկրասարդ թիւրքերի
կուսակցութեան Պարիզի կոմիտեմը դիմել է
մի հանրագործ ֆրանսիական արտաքին գոր-
ծերի մինիստր Դէկլասէին, որով խնդրում է
Ֆրանսիայի միջամտութիւնը թիւրքական գոր-
ծերում, թեթեւացնելու համար այն տանջանք-
ները, որ կրում են Թիւրքիայի բնակիչները
այժմեան բեթմի օրով:

—«Post» լրագրի Լօնդօնի թղթակիցը հա-
ղորդում է, թէ անգլիական զինուորական մի-
նիստրութեան մէջ տիրում է չափազանց մեծ
յուզմունք: «Կարելի է ենթադրել,—ասում է
այդ թղթակիցը,—որ Կապի գաղթականութիւ-
նից ստացված են երկիրաւոր լուրեր: War
Office հրաժարվում է որ եւ է բացատրութիւն
տալ այդ մասին, բայց հէնց այդ յաճառ լու-
թիւնը տեղիք է տալիս ենթադրելու, որ իրերի
գրութիւնը հարաւ-աֆրիկական պատերազմի
դաշտում կրիտիկական է: Կարծում են, որ
այդտեղ ընկնել է աֆրիկանդներին ընդհանուր
պատժարութիւն:

—«Standard» հաղորդում է, թէ գերմանա-
կան բանկերը պատրաստվում են մի լաւ գէ-
շփտ անելու. նրանք առաջարկում են թիւր-
քերին փոխառութիւն հետեւեալ պայմաննե-
րով: Փոխառութեան անուանական գումարը
կը լինի 1,600,000 թիւրքական իրա: Այս
գումարի կէսը բանկերը կը պահեն իրանց մօտ,
իրեւ Վճար նախկին փոխառութիւնների, իսկ
800,000 իրան կը տան թիւրք կառավարու-
թեան, իր անխառնակ կարիքները հոգալու
համար:

ՄՇԱԿԻՒ ՀԵՈՒԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻԹ

13 հոկտեմբերի

ՊԱՐԻԶ: Կառավարչական շրջաններում
զգուշացող հերքում են գերմանական աղբիւ-
րներից ստացվող լուրերը Ռուսաստանի եւ Ֆը-
րանսիայի մէջ տեղի ունեցած տարածայնու-
թիւնների մասին Կ. Պոլսում:
ԼՕՆԴՈՆ: «Daily Mail» լրագրի Թէհրանից
ստացված տեղեկութիւններին հիման վրա, դա-
ւադրութիւն է բացված Շահի կեանքի դէմ:
Շահի եղբայրները դաւադրութեան մասնակից
չեն: Մեծ վիզիրը այժմ աւելի խիստ միջոցներ է
ձեռք առնում քան երբ եւ իցէ:

ՕՂԵՍԱ: Այրվող անօնիմ ակցիօնէրական
ընկերութեան խցանափայտի մեծ գործատուն.
նա ապահովագրված էր մի քանի ընկերու-
թիւնների մէջ 480,000 բուլլով, լիսար կէս
միլիօնից աւելի է հաշւում:
Նիժնի-ՆՎՈՐՈՒՄ: Վոլգայի վրա, Բէշմայի
վրա, խորտակվեց Ջարաբինի շոգենաւային
ընկերութեան «Վիմարի» շոգենաւը, որ գնում էր
ճանապարհորդներով եւ բեռնով: Մարդիկ չեն
լիսարվել, բայց բեռները թաց են եղել:
ՄՕՍԿՎԱ: Ոստիկանութիւնը կալանաւորեց
դեղագործ Շարաւֆի որդուն, որը խաբէրա-
յութեամբ պետական բանկից 3900 բուլլի
ստացողներին մէկն էր:

Այսօր, իշխանութիւնների ներկայութեամբ,
միտրօպոլիտ Վլադիմիր օծեց միտրօպոլիտ Սեր-
գիի անուան ապաստարանը անբուժելի հի-
ւանդների համար, որ կառուցվել է Լեւաինայի
միջոցներով: Ապաստարանում մի սենեակ
նուիրված է հանգուցեալ միտրօպոլիտի յիշա-
տակին:

ԽՍԿԿՎԱ: Երէկ, երեկոյեան, ժամանեց այս-
տեղ հայր Եօհան Կրօնաւարդի. նա այցելեց
մի քանի ցաւագարներին, պատարագ մատու-
ցեց Յարութեան եկեղեցում եւ այսօր, երե-
կոյեան, ճանապարհ ընկաւ դէպի հիւսիս:
Կ. ՊՕԼԻՍ: Լուրերին նայելով, մեծ վիզիրը
հիւանդացաւ ուրեմիայով:

Արտաքին գործերի մինիստրի վախճանված
օգնական Արթիւր-Փաշա Դադեանի տեղ նշա-
նակված է Պարիզի այժմեան թիւրքաց դեա-
պան Մուշիր-բէյ:

ԲԷԼԳԻԱ: Սկուպչիկայի մեծամասնութեան
ուղերձը շնորհակալութիւն է յայտնում թա-
ղաւորին օսանմանագրութեան փոփոխութեան
առթիւով:

ԼՕՆԴՈՆ: Երէկ Չեմբերլէյն մի ճառ արտա-
սանեց Էդինբուրգում: Խիստ կերպով յարձակ-
վելով իրանգագիւնների վրա, նա յայտնեց, որ
կառավարութիւնը ապագայ ընտրութիւններից
առաջ կը մտցնի համայնքների ժողովը մի ա-
ռաջարկութիւն՝ իրանգագիւն ներկայացուցչու-
թիւնը կրճատելու մասին: Հեռուից կորակա-
նապէս հերքում էր այն, որ իր թէ կառա-
վարութիւնը պատրաստված էր հարաւ-աֆրի-
կական պատերազմը յայտարարել աւելի վաղ,
քան նա բռնկվեց: Քանի որ բռնկները մեր-

ժեցին իրանց առաջարկած խաղաղութեան
բարենպաստ պայմանները, պատերազմը մինչեւ
վերջը պիտի հասցնէին Ներկայումս անհրաժեշտ
է աւելի խիստ միջոցներ ձեռք առնել ապա-
տանների եւ պարտիզանական խմբերի դէմ:
Վերջում միմիայն շեշտում էր այն բանի վրա,
որ գրութիւնը պատերազմական բեմի վրա
երկուդի ոչ մի հիմք չէ ներկայացնում:

14 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Պաշտօնապէս Աւղանական
էմիր Աղաուրուհան խանի հէնց մահից յետոյ,
արտասահմանեան մամուլը մէջ ակնցիւն տե-
ղեկութիւններ երեւալ այն բանի մասին, իբր
թէ ռուսաց զինուորական մինիստրութիւնը
ինչ-որ պատրաստութիւններ է տեսնում յուզ-
մունքներ ծագելու դէպքում մեր միջին-ասիա-
կան կալուածներին կից աւղանական շրջան-
ներում: Այդ տեղեկութիւնները զուրկ են հիմ-
քից:

ԲԲԷՍԱ: «Լէօն Գաւաթտա» զրահակիր կրէյ-
սէրը ծովը իջեցնելու ժամանակ ծովային մի-
նիստը ճառ ասեց, որի մէջ մասնացոյց արեց,
որ այդ նաւը կը յիշենէ այն մարդու մասին,
որը երբեք յոյսը չէր կորցնում հայրենիքի
վրա: Նաւը, նրա խօսքով, պատկանում է
այնպիսիների թիւին, որոնք պէտք է երախա-
ւորեն Ֆրանսիայի նոյնպիսի ապահովութիւնը
ծովի վրա, որպիսին նա վայելում է ցամաքի
վրա: Ոչ թէ թիւը, այլ նաւերի յատկութիւնը
ունի մեծ նշանակութիւն: Մինիստրը վերջաց-
րեց իր ճառը մասնացոյց անելով այն բանի
վրա, որ զօրեղ ժողովուրդները կամենում են
խաղաղութիւն եւ ազատութիւն ունենալ, չը
հրաժարվելով պատերից:

ԲԵԼԳԻԱ: Անկախ արմատականների կազ-
մած ուղերձի նախագիծում ասված է, որ նոր
սահմանադրութիւնը կարօտ է փոփոխութեան
եւ գոհունակութիւն է յայտնված այն բանի
առթիւով, որ թագաժառանգութեան հարցին
վերաբերեալ լուրերը անհիմն դուրս եկան:
Ուղերձի մէջ, վերջապէս, ուշադրութիւն է
դարձնվում այն բանի վրա, որ մի քանի ար-
մատականների եւ նապրէքսեանկների միջև
գոյութիւն ունեցող համաձայնութիւնը ան-
պայման անքնական է:

ԼՕՆԴՈՆ: «Standard» լրագրի Պարիզի թղ-
թակիցը իմացաւ, որ գործը, որքան վերաբը-
րում է ֆրանսիական կառավարութեան, ոչինչ
քաղաքական քայլեր չէ արված ոչ Կրեմլն
Յունաստանի հետ միացնելու հարցի վերաբը-
մամբ, ոչ պետութիւնների համաձայնութեան
առթիւով ստիպելու համար Թիւրքիան՝ կատա-
րելու Բերլինի կոնգրէսի վճիռները:

15 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Հոկտեմբերի 13-ին, երեկո-
յեան, կայացաւ խուլ ու համերկի հետաքրքու-
թիւն ներկայացնող ժողովը, որպէս զի հա-
րաւորութիւն տրվի խուլ եւ համերկին իրանց
վիճակի բարեփոխման հարցի մասին մտածել եւ
աւելի սերտ յարաբերութիւններ հաստատել
նրանց մէջ: Այդ բանի նախաձեռնութեանը
պատկանում է Թագուհի Կայսրուհի Մարիա
Ֆէօդորովնայի խուլ ու համերկի հոգաբարձու-
թեան նախագահ պատաւօր ինստիտուլ Մէր-
դէրին, որը, բայց վերջերս խուլ ու համերկի
համար մի շարք հիմնարկութիւններ բանալուց,
անհրաժեշտ համարեց նպատակի նրանց մօտ
յարաբերութիւններին եւ զրանով հոգեկան
կեանք առաջացնել նրանց մէջ:

ԵՕԿՉԱՄԱ: Ֆինանսական վարչութիւնը
ճանուցեց, որ հրատարակել է 16½ միլիօնի
օրիգագիւններ: Լուրերին նայելով եապօնա-
կան բանկը գնեց ամբողջ փոխառութիւնը, կա-
ռավարութիւնը այդ գումարով յետ կը գնէ 8
միլիօն գումարի ուրիշ օրիգագիւններ եւ կը
ծածկէ Չինաստանի վրա արած արշաւանքի
ծախսերը:

ԲՕՄԲԷ: Ստացված տեղեկութիւնները հաս-
տատում են Թէհրանից ուղարկած հաղորդագ-
րութիւնը Շահի դէմ եղած դաւադրութեան
մասին: Ինչպէս այդ տեղեկութիւններից երե-
ւում է, պարզալուրինները բերված են Կուշան,
ուր ենթարկված են յաւակական բանտարկու-
թեան: Մէկ անուանի ընկալին անցկացրին
Թէհրանի փողոցներով մերկ եւ չըթալակապ
Դաւադրները յոյս ունենին ազգաբնակչութեան
օգնութեան վրա, որովհետեւ երկրի մէջ մեծ
դժգոհութիւն է յարուցել այն լուրը, թէ Շահը
ուխտագնացութեան կարիքների եւ երկրորդ
անգամ Եւրոպա դնալու վրա:

ՀՌՕՄ: Բրազիլիայից «Tribuna» լրագրի ստա-
ցած տեղեկութիւնների համեմատ, Անգլիան
պաշտօնապէս դիմեց իտալական թագաւորին՝
խնդրելով լուծել, որպէս միջնորդ դատաւոր,

